ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«20» 03 2023թ.
№ ԿԱՄ/2-408

«ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 02835324
ՀՀ, ք. Երևան, Արովյան փ. 23
հեռ. +374 94 277 400
էլ. հասցեն՝ garg.llc@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերության միջև 18.02.2022թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-22-9/5-3 գնման պայմանագրի և Պայմանագրին կից 29.06.2022թ. կնքված N1 համաձայնագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունը 2022թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում պետք է մատակարարեր ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ), amoxicillin (amoxicillin trihydrate), clavulanic acid (potassium clavulanate), որոնցից 1 870 000 ՀՀ դրամի ապրանքները չեն մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **2023թ. մարտի 20-ին** միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում ենք, որ «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել 44 413 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որից 5000 հատի մասով 30 388 ՀՀ դրամի չափով տույժը հաշվարկված է մինչև 30.12.2022թ., իսկ մնացած 5000 հատի մասով 14 025 ՀՀ դրամի չափով տույժը հաշվարկված է մինչև 30.12.2022թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **187 000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **280 500** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2023թ. մարտի 29-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 187 000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 280 500 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2023թ. մարտի 29-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2078 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ